ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 11-րդ մասի 6-րդ և 17-րդ կետերի պահանջներով, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 17.5-րդ կետի 27-րդ ենթակետի և ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 29.07.2025թ. թիվ 15/13-Լ որոշման 5-րդ կետի պահանջներով,

հաշվի առնելով ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 29.07.2025թ. թիվ 15/13-Լ որոշմամբ ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողով հրավիրված լինելու հանգամանքը,

նկատի ունենալով ՀՀ փաստաբանների պալատի 13.09.2025թ. հերթական ընդհանուր ժողովի կազմակերպման և անցկացման գործընթացում ՀՀ փաստաբանների պալատի օժանդակության պայմանները և կարգը, ինչպես նաև ընդհանուր ժողովի կազմակերպմանն ուղղված գործողությունների ժամանակացույց սահմանելու անհրաժեշտությունը.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Հաստատել (սահմանել).

1.1 «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի 2025 թվականի սեպտեմբերի 13-ի ընդհանուր ժողովի կազմակերպման և անցկացման գործընթացում օժանդակություն ցուցաբերելու մասին» կարգը՝ համաձայն հավելված 1-ի:

1.2 Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի 2025 թվականի սեպտեմբերի 13-ի ընդհանուր ժողովի կազմակերպմանն ուղղված գործողությունների ժամանակացույցը՝ համաձայն հավելված 2-ի:

2. Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝

2.1. ժամանակացույցի մասին իրազեկել հաշվիչ հանձնաժողովի անդամներին.

2.2. իրագործել ժամանակացույցում նշված ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի կողմից կատարման ենթակա գործողությունները (այդ թվում՝ հաշվիչ հանձնաժողովին տեխնիկական օժանդակություն ցուցաբերելու):

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Սիմոն Բաբայան

08 օգոստոս 2025թ.
թիվ 240-Լ
ք.Երևան